ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՎԵՐԼՈՒԾԵՑ Լ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Վեդի համայնքում գործում են 3 մանկապարտեզներ և 3 նախակրթարան: Մանկապարտեզները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ են , գործում են ՀՀ օրենսդրությամբ և իրենց կանոնադրությամբ: Լիցենզավորված են: Նախակրթարանից մեկը գործում է Վեդու թիվ 2 հիմնական դպրոցում, մանկապարտեզների կրթական ծրագրերով: Մյուս նախակրթարանները մասնավոր են, սակայն այս նախակրթարաններում հաճախող նախադպրոցական տարիք ունեցող երեխաները գալիս են միայն մանկապարտեզից հետո, 17-00-ից մինչև 18-30 մնալու համար: Մասնավոր նախակրթարաններ հաճախում են 15 մանկապարտեզի սան: Վեդու թիվ 2 դպրոցի նախակրթարանում ուսանում են 20 երեխա: Վեդու թիվ 1 մանկապարտեզում կա 188 հաշվառված ցուցակային երեխա, Վեդու թիվ 2 մանկապարտեզում ցուցակային թիվը 176 երեխա: Վեդու թիվ 3 մանկապարտեզում ցուցակային երեխաների թիվը՝ 173: Ընդհանուր առմամբ մանկապարտեզներում հաշվառվել են 537 նախադպրոցական տարիքի երեխա: Եվս 20 երեխա հաճախում են նախակրթարան, այսպիսով 557 երեխա ստանում են կամ կարող են ստանալ նախադպրոցական կրթություն:



Վեդի համայնքում նախադպրոցական տարիքի երեխաների թիվը վերջին տարիներին տատանվում է 900-1030, որը պայմանավորված է ինչպես համայնքում բնակչության թվի աճով, այնպես էլ առանց գրանցման բնակվողների հետ տարվող կանոնակարգված աշխատանքի հետևանքով:



Այս պահին Վեդի համայնքում հաշվառված 1031 երեխաներից 230 բացակայում են և մշտական բնակություն են հաստատել այլ համայնքներում ու այլ երկրներում:

261 երեխաների ծնողներից 100 կարծում են որ երեխան մանկապարտեզի համարն դեռ պատրաստ չէ: 15 երեխա ունի առողջական խնդիրներ, դրա համար չեն բերում մանկապարտեզ:

530 երեխաները որոնք հաշվառված են մանկապարտեզներում նույնպես լիարժեք չեն կարող ստանալ նախադպրոցական կրթություն, որովհետև առաջին հերթին հակասում է ՀՀ օրենսդրությանը, հակասում է սանիտարահիգենիկ վիճակին և մանկապարտեզներում առկա է գույքի պակասի խնդիր:

Վերջին տարիներին կա տենդեց ուղղված մանկապարտեզ հաճախող երեխաների թվի բարձրացմանը: Մանկապարտեզ հաճախող երեխաների թվի բարձրացումը կարող է լինել.

1. Ծնողի գիտակցության բարձրացման արդյունք
2. Ծնողի զբաղվածությունից
3. Ծնողի ավելի հանգիստ կյանքի ձգտում
4. Մանկապարտեզի ֆինանսական մատչելիությունը / ծնողը 20-22 օր չի կարող 5000 դրամով 3 անգամ կերակրել իր երեխային/
5. Մատուցվող Ծառայությունների որակի բարձրացում

Այսպես ստորև ներկայացվում է վերջին 5 տարիներին մարտ ամսին հաճախող երեխաների միջին թվի վերաբերյալ.



Երեխաների մարտ ամսին բարձր հաճախականությունը կարելի էր կապել եղանակի բարենպաստ պայմաններից ելնելով:



Սակայն չի կարելի հաշվի չառնել, որ ունենք բարենպաստ եղանակային պայմաններ մայիս և սեպտեմբեր ամիսներին, որի ընթացքում ուսումնասիրելով մի քանի տարիներ չի ֆիքսվել նման բարձր հաճախելիություն:





Այսպիսով ուսումնասիրելով մանկապարտեզ հաճախող և չհաճախող երեխաների թիվը առաջարկում եմ

1. բոլոր մանկապարտեզներում նախատեսել մեկական խմբի ավելացում , որը համայնքի բյուջեի ծախսային մասով կավելացնի.

Թիվ 1 մանկապարտեզում 5-րդ խումբ բացելու համար անհրաժեշտ է կապիտալ վերանորոգել խմբասենյակը – 5.000.0 դրամ + գույքի ձեռք բերում 35 երեխայի համար 1.950.0

Տարեկան կտրվածով բյուջեի ծախսային հոդվածում կավելանա – 2.000.0 – 2.500.0 դրամ, եթե ավելացնենք դաստիարակ, դայակ և խոհարարի 0.5 դրույք:

Թիվ 2 մանկապարտեզում 5-րդ խումբ բացելու համար անհրաժեշտ է մասնակի վերանորոգել խմբասենյակը – 2 մլն դրամ

1. Մուտքի դռան փոխարինում նորով – 200.000 դրամ
2. Կոսմետիկ վերանորոգում – 300.000 դրամ
3. Պատուհանների մասնակի վերանորոգում
4. Զուգարանկոնք – 2 հատ * 35.000- 70.000 դրամ
5. Լվացարան – 2 հատ * - 35.000 – 70.000 դրամ
6. Ծորակ – 3 հատ *5000-15.000
7. Դետալներ միացման համար – 20.000
8. Աթոռ – 35 հատ * 3.500.0 – 122.000 դրամ
9. Սպիտակեղեն – 35 հատ * 4.000 – 140.000 դրամ
10. Ծածկոց – 35 հատ * 4.000 – 140.000 դրամ
11. Անկողին – 35 հատ *10.000 – 350.000 դրամ
12. Սեղան – 9 հատ * 15000 - 135.000 դրամ
13. Սպիտակեղենի պահարան – 25.000 դրամ
14. Սպասքի պահարան – 25.000 դրամ
15. Սպասք 40 երեխայի համար – 60.000 դրամ
16. Գրասեղան 2 * 25000 – 50.000 դրամ
17. Աթոռ 2 *10000- 20.000 դրամ

Տարեկան կտրվածով բյուջեի ծախսային հոդվածում կավելանա – 2.000.0 -2.500.0 դրամ, եթե ավելացնենք դաստիարակ, դայակ և խոհարարի 0.5 դրույք:

Թիվ 3 մանկապարտեզում 5-րդ խումբ բացելու համար անհրաժեշտ է 2 մլն դրամ

1. Մահճակալ 35* 21.000.0 – 735.000
2. Անկողնային պարագաներ 35*10.000- 350.000
3. Սպիտակեղեն – 35*4000-140.000
4. Աթոռ – 35*3500 -122.000
5. Սեղան – 9*1500-135.000
6. Զգեստապահարան – 4*2.500-100.000
7. Սպիտակեղենի պահարան – 25.000
8. Սպասքի պահարան – 25.000
9. Կախիչներ – 30.000
10. Գրասեղան – 50.000
11. Աթոռ – 20.000
12. Ծածկոց – 35*4500- 140.000
13. Սպասք 40 հոգու համար – 60.000
14. Զուգարանկոնք – 2 հատ * 35.000- 70.000 դրամ

15. Լվացարան – 2 հատ * - 35.000 – 70.000 դրամ

Տարեկան կտրվածով բյուջեի ծախսային հոդվածում կավելանա – 2.000.0 -2.500.0 դրամ, եթե ավելացնենք դաստիարակ, դայակ և խոհարարի 0.5 դրույք:

Վեղու թիվ 1 մանկապարտեզ



Հարկ է նշել, որ 2018թ. մարտ ամսվա ընթացքում միջին հաճախելության չափը չի գրանցվել նախկինում ոչ մի ամսվա հաճախելիությամբ: Ամենա շատ հաճախելիություն որպես կանոն գրանցում է մայիս և սեպտեմբեր ամիսներին:





Վեդու թիվ 2 մանկապարտեզ


մարտ ամսվա միջին հաճախումը ըստ տարիների
160
140
120
100
80
60
40
20
0
76
77
85
65
136
2014
2015
2016
2017
2018


մայիս ամսվա միջին հաճախումը ըստ տարիների
140
120
100
80
60
40
20
0
128
129
126
130
0
2014
2015
2016
2017
2018



Վեղու թիվ 3 մանկապարտեզ




մայիս ամսվա միջին հաճախումը ըստ տարիների
160
140
120
100
80
60
40
20
0
108
109
121
140
0
2014
2015
2016
2017
2018


սեպտեմբեր ամսվա միջին հաճախումը ըստ տարիների
140
120
100
80
60
40
20
0
104
108
124
121
0
2014
2015
2016
2017
2018